ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2023 թվականի թիվ 61-Ա

ք. Երևան

«ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊ ընկերության՝ լսողական ծրագրի հաճախականության օգտագործման ՌՀ N 322 լիցենզիան վերաձևակերպելու մասին 2023 թվականի հունիսի 27-ի հայտը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել «ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊ ընկերության հայտը և «ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊ ընկերության անվամբ վերաձևակերպել «ՀԻԲՐԻԴ ԲՐՈԹՔԱՍԹԻՆԳ» ՍՊ ընկերությանը 2021 թվականի օգոստոսի 19-ին տրամադրված ՌՀ N 322 լիցենզիան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2023թ. հունիսի 30
ք. Երևան